Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 14-ի N 898 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից իրականացվող՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում հավաստագրերի տրամադրման, հիփոթեքային վարկերի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված աջակցության գումարների տրամադրման և օգտագործման հետ կապված գործընթացները, ինչպես նաև աջակցության դադարեցման հիմքերը և ընթացակարգը:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **ծրագիր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիր».

2) **դիմող՝** ծրագրի շահառուի կարգավիճակ ստանալու նպատակով դիմում-հայտարարություն ներկայացրած անձ.

3) **շահառու՝** որոշման N 1 հավելվածի 5-րդ կետով սահմանված ընտանիք.

4) **հիփոթեքային վարկ՝** Հայաստանի Հանրապետությունում բնակարան կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունք կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տրամադրվող կամ մինչև սույն որոշումն ուժի

մեջ մտնելը նույն նպատակով շահառուին արդեն իսկ տրամադրված և գործող հիփոթեքային վարկ.

5) **կազմակերպություն՝** առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ, որոնք ծրագրի շրջանակում համագործակցում են ծառայության հետ.

6) **ընտանիքի անդամ՝** որոշման N 1 հավելվածի 6-րդ կետով սահմանված միավորի մեջ ներառված անձ.

7) **վարկային պայմանագիր՝** ծրագրի ներքո հիփոթեքային վարկի վերաբերյալ կազմակերպության և շահառուի միջև կնքված վարկային պայմանագիր.

8) **աջակցության գումար՝** հիփոթեքային վարկի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում ծառայության կողմից որոշման N 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված սահմանաչափերով.

9) **հավաստագիր՝** սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված, ծառայության կողմից տրամադրվող՝ ծրագրի շահառու հանդիսանալու մասին փաստը հավաստող փաստաթուղթ.

10) **հաշիվ՝** կազմակերպության բանկային հաշիվ, որին ծրագրի շրջանակում ծառայությունը փոխանցում է աջակցության գումարը.

11) **պայմանագիր՝** սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ծրագրի շրջանակում ծառայության և կազմակերպության միջև կնքված պայմանագիր:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Ծրագիրն իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) որոշման N 1 հավելվածի 18-րդ կետով սահմանված պահանջներին բավարարող դիմողը՝ 2024 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը էլեկտրոնային տարբերակով դիմում է ծառայություն՝ դիմում-հայտարարության մեջ նշելով՝

ա. իր և իր ընտանիքի անդամի (անդամների) տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը

կամ հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը), ազգակցական կապը),

բ. հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը,

գ. փաստացի բնակության վայրի հասցեն,

դ. որոշման N 1 հավելվածի 4-րդ կետով նախատեսված աջակցության նախընտրելի եղանակը (բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերում, անհատական բնակելի տան կառուցում, գործող հիփոթեքային վարկի մարման աջակցություն),

ե. անհատական բնակելի տան կառուցման դեպքում՝ անհատական բնակելի տների կառուցման բազմակի օգտագործման օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի ցանկից իր նախընտրած տարբերակի կամ լիցենզավորված կազմակերպության կողմից մշակված, սահմանված կարգով փորձաքննություն անցած և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցված նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության մասին.

2) ստացված դիմում-հայտարարության մշակման արդյունքում 10 աշխատանքային օրվա ընթացքում որոշման պահանջներին բավարարող դիմողն ինքնաշխատ եղանակով ստանում է շահառուի կարգավիճակ, հիմք ընդունելով՝

ա. 2020 թվականի սեպտեմբերի 27-ից և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալները,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառուների տվյալները՝ որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պայմանի ստուգման համար,

գ. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմանի ստուգման համար,

դ. բնակչության պետական ռեգիստրից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու վերաբերյալ,

ե. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը երեխա-ծնող կապի, շահառուների ողջ լինելու ու գրանցված ամուսնության առկայության/բացակայության վերաբերյալ.

3) ծրագրի շահառու հանդիսանալու դեպքում 2-օրյա ժամկետում ինքնաշխատ եղանակով ձևավորվում է հավաստագիրը, որը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով դիմողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին.

4) ծրագրի շահառու չհանդիսանալու դեպքում 2-օրյա ժամկետում ինքնաշխատ եղանակով հաղորդագրություն է ուղարկվում դիմողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով սույն կետի 5-րդ ենթակետով նախատեսված մերժման հիմքերը.

5) դիմում-հայտարարությունը մերժվում է, եթե՝

ա. դիմողի կամ ընտանիքի որևէ անդամի տվյալը բացակայում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հաշվառված բռնի տեղահանվածների տվյալների շտեմարանում,

բ. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը 2023 թվականի սեպտեմբերի 19-ի կամ դիմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում ունի սեփակա-նության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք կամ «Գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք, եթե ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով բնակելի մակերեսը գերազանցում է 12 քառ. մ՝ բացառությամբ հիփոթեքային վարկի շրջանակներում գրավի առարկա հանդիսացող միակ անշարժ գույքի կամ գնման իրավունքի,

գ. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը բնակչության պետական ռեգիստրից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվության համաձայն՝ չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,

դ. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվության համաձայն՝ առկա է երեխա-ծնող կապի, շահառուների ողջ լինելու ու գրանցված ամուսնության վերաբերյալ անհամապատասխանություն.

6) դիմում-հայտարարությունը մերժվելու դեպքում հնարավոր է ներկայացնել նոր դիմում-հայտարարություն՝ լրացնելով ընտանիքի՝ որոշման պահանջներին բավարարող անդամների տվյալները.

7) հավաստագիրն ստանալուց հետո շահառուն դիմում է կազմակերպություն հիփոթեքային վարկավորման գործընթացն սկսելու համար.

8) շահառուի հետ համապատասխան վարկային պայմանագիր կնքելուց և հիփոթեքային վարկը փաստացի հատկացնելուց հետո, կազմակերպությունը ծառայությանն է տրամադրում հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցը և վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկությունները.

9) ծառայությունն ամսական պարբերականությամբ կազմակերպության հաշվին է փոխանցում աջակցության գումարները՝ ըստ սույն կետի 8-րդ ենթակետում նշված ժամանակացույցի: Ժամանակացույցով նախատեսված վճարումները (աջակցության գումարի սահմանաչափին համապատասխան) չիրականացնելու դեպքում ժամկետանց պարտավորությունների համար տույժերը, տուգանքները վճարում է ծառայությունը.

10) եթե հիփոթեքային վարկի գծով ամսական վճարները (մայր գումար և տոկոսագումար) գերազանցում են աջակցության գումարի սահմանաչափերը,

ապա սույն կետի 8-րդ ենթակետում նշված ժամանակացույցով սահմանված ամսական վճարների և աջակցության գումարի տարբերությունը վճարվում է շահառուի կողմից.

11) ծրագրի իրականացման ամբողջ գործընթացը (դիմում-հայտարարություն-ների ընդունում, տվյալների նույնականացում, հաստատում, շահառուի կարգա-վիճակի տրամադրում, աջակցության վճարում) իրականացվում է համապատաս-խան ծրագրային ապահովման միջոցով՝ ինքնաշխատ եղանակով.

12) մինչև սույն կետի 11-րդ ենթակետում նշված ծրագրային ապահովման ներդրումը՝ ծրագրի իրականացման գործընթացն իրականացվում է մեխանիկական եղանակով, իսկ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները ծառայության և կազմակերպությունների միջև փոխանակվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (ՍԻԲԻԷՅ-նեթ միջբանկային համակարգչային ցանցի միջոցով):

3. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

4. Աջակցության գումարների տրամադրման վաղաժամկետ դադարեցման հիմքերը սահմանված են որոշման N 1 հավելվածի 14-րդ կետով, որով սահմանված հանգամանքների ի հայտ գալու դեպքում, դրամական աջակցության վճարումն ամբողջությամբ դադարում է այդ պահից սկսած, բացառությամբ որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հանգամանքի ի հայտ գալու դեպքի, որի ժամանակ շարունակվում է աջակցության գումարի վճարումը կազմա-կերպությանը մինչև վարկի ամբողջական մարումը, իսկ ձեռք բերված կամ կառուցվող բնակարանի կամ անհատական բնակելի տան նկատմամբ սեփական-ության իրավունքը փոխանցվում է պետությանը:

5. Ծրագրով նախատեսված աջակցության դադարեցման բոլոր դեպքերում ձեռք բերված կամ կառուցվող բնակարանի կամ անհատական բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է պետությանը:

6. Որոշման N 1 հավելվածի 14-րդ կետով սահմանված իրավիճակներում աջակցության գումարի վճարումն ամբողջական դադարեցնելու դեպքում, այդ պահի դրությամբ վճարված աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման:

7. Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում բնակարանը կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքը կամ անհատական բնակելի տունն օտարելու դեպքում պետական աջակցության գումարը շահառուի կողմից ենթակա է վերադարձման պետությանը՝ փոխհամաձայնեցված եղանակով կամ դատական կարգով, իսկ դրա ձեռքբերման նախապատվության իրավունքը պատկանում է պետությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ